ԽՈՐՀՐԴԻ 1984 թվականի ապրիլի 10–ի թիվ 84/253/ԵՏՀ ՈՒԹԵՐՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու համար պատասխանատու անձանց հաստատման մասին

(ընդունված Պայմանագրի 54(3)(է) հոդվածի հիման վրա)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 54(3)(է) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ թիվ 78/660/ԵՏՀ (4) հրահանգի համաձայն՝ որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկվեն նման աուդիտ անցկացնելու իրավասություն ունեցող մեկ կամ ավելի անձանց կողմից, և նման աուդիտ անցկացնելու պարտականությունից կարող են ազատվել միայն այդ հրահանգի 11–րդ հոդվածում նշված ընկերությունները,

քանի որ վերը նշված հրահանգը լրացվել է «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» թիվ 83/349/ԵՏՀ (5) հրահանգով,

քանի որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտ անցկացնելու իրավասություն ունեցող անձանց որակավորումները պետք է ներդաշնակեցվեն. քանի որ պետք է երաշխավորել այդ անձանց անկախությունն ու բարի համբավը,

քանի որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտի համար անհրաժեշտ տեսական գիտելիքների բարձր մակարդակը և այդ գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունը պետք է ապահովել մասնագիտական ունակությունները ստուգող քննության միջոցով,

քանի որ անդամ պետությունները պետք է իրավասու լինեն հաստատելու այն անձանց, որոնք, չնայած չեն բավարարում տեսական ուսուցման համար սահմանված բոլոր պայմանները, այդուհանդերձ, երկար ժամանակ ներգրավված են եղել մասնագիտական գործունեության մեջ՝ բավարար փորձառություն ձեռք բերելով ֆինանսների, իրավունքի և հաշվապահական հաշվառման բնագավառներում, և որոնք հաջող են հանձնել մասնագիտական ունակությունները ստուգող քննությունը,

քանի որ անդամ պետությունները պետք է նաև իրավասու լինեն ընդունելու անցումային դրույթներ՝ հօգուտ մասնագիտացված անձանց, (1) ՊՏ թիվ C 112,

13.05.1978թ., էջ 6, ՊՏ թիվ C 317, 18.12.1975թ., էջ 6։ (2) ՊՏ թիվ C 140, 05.06.1979թ., էջ 154։ (3) ՊՏ թիվ C 171, 09.07.1979թ., էջ 30։ (4) ՊՏ թիվ L 222, 14.08.1978թ., էջ 11։ (5) ՊՏ թիվ L 193, 18.07.1983թ., էջ 1։

քանի որ անդամ պետությունները կկարողանան հաստատել և՛ ֆիզիկական անձանց, և՛ աուդիտորական կազմակերպություններին, որոնք կարող են լինել իրավաբանական անձինք կամ այլ տեսակի ընկերություն, կազմակերպություն կամ ընկերակցություն,

քանի որ այդ աուդիտորական կազմակերպությունների անունից հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտ անցկացնող ֆիզիկական անձինք պարտավոր են բավարարել սույն Հրահանգի պայմանները,

քանի որ անդամ պետությունը կկարողանա հաստատել այն անձանց, որոնք այդ պետությունից դուրս ձեռք են բերել սույն Հրահանգով պահանջվող որակավորումներին համարժեք որակավորումներ,

քանի որ անդամ պետությանը, որը սույն Հրահանգի ընդունման պահին ճանաչում է այն ֆիզիկական անձանց, որոնք բավարարում են սույն Հրահանգով սահմանված պայմանները, սակայն որոնց՝ մասնագիտական ունակությունները ստուգող քննության մակարդակը ցածր է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման, ավարտական քննության մակարդակից, պետք է թույլատրվի, որոշակի պայմանների դեպքում և մինչև հետագա համաձայնեցման գործընթացի ավարտը, շարունակել սահմանափակ չափի ընկերությունների և կազմակերպությունների խմբերի հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացման նպատակով այդ անձանց հատուկ կերպով հաստատել այն դեպքում, երբ նման անդամ պետությունը չի օգտվել Համայնքի հրահանգներով նախատեսված՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման մասով պարտավորություններից ազատելու հնարավորություններից։

քանի որ սույն Հրահանգը չի կարգավորում ո՛չ հիմնադրման իրավունքը, ո՛չ էլ ծառայություններ մատուցելու ազատությունը՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացման համար պատասխանատու անձանց առումով,

քանի որ նման աուդիտ անցկացնելու նպատակով այլ անդամ պետությունների քաղաքացիներին հաստատելու փաստի ճանաչումը հատուկ կկարգավորվի ֆինանսական, տնտեսական և հաշվապահական հաշվառման ոլորտներում գործունեություն ձեռնարկելու և ծավալելու, ինչպես նաև այդ ոլորտներում ծառայություններ մատուցելու ազատության վերաբերյալ հրահանգներով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I Գործողության ոլորտը

Հոդված 1

1. Սույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են անդամ պետությունների՝ այն անձանց վերաբերյալ օրենքների, կանոնակարգերի (այլ նորմատիվ իրավական ակտերի), վարչական ակտերի նկատմամբ, որոնք պատասխանատու են՝

ա) ընկերությունների և կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի անցկացման և տարեկան զեկույցների ու այդ տարեկան ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունն ստուգելու համար այնքանով, որքանով այդ աուդիտն ու ստուգումը պահանջվում են Համայնքի իրավունքով.

բ) կազմակերպությունների խմբերի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի անցկացման և տարեկան համախմբված զեկույցների ու այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը ստուգելու համար այնքանով, որքանով այդ աուդիտն ու ստուգումը պահանջվում են Համայնքի իրավունքով:

2. 1-ին պարբերության մեջ նշված անձինք կարող են լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ այլ տեսակի ընկերություն, կազմակերպություն կամ ընկերակցություն (սույն Հրահանգով սահմանված աուդիտորական կազմակերպություն)՝ կախված յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրությունից։

ԲԱԺԻՆ II Հաստատման կանոնները

Հոդված 2

1. 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտը պետք է իրականացվի միայն հաստատված անձանց կողմից։ Անդամ պետությունների մարմինները կարող են հաստատել միայն՝

ա) ֆիզիկական անձանց, ովքեր բավարարում են առնվազն 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները.

բ) աուդիտորական կազմակերպություններին, որոնք բավարարում են առնվազն հետևյալ պայմանները՝

i) աուդիտորական կազմակերպությունների անունից 1-ին հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնող ֆիզիկական անձինք պետք է առնվազն բավարարեն 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները. անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այդ ֆիզիկական անձինք ևս պետք է հաստատվեն.

ii) ձայնի իրավունքների մեծամասնությունը պետք է պատկանի առնվազն 3–19–րդ հոդվածներով (բացառությամբ 11(1)(բ) հոդվածի) սահմանված պայմանները բավարարող ֆիզիկական անձանց կամ աուդիտորական կազմակերպություններին. անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այդ ֆիզիկական անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները ևս պետք է հաստատվեն։

Այդուհանդերձ, այն անդամ պետությունները, որոնք նման մեծամասնության պահանջ չեն սահմանում սույն Հրահանգի ընդունման պահին, կարող են չսահմանել այդ պահանջը՝ պայմանով, որ աուդիտորական կազմակերպությունում բոլոր բաժնետոմսերը գրանցված են և կարող են փոխանցվել միայն աուդիտորական կազմակերպության համաձայնությամբ և (կամ) եթե անդամ պետությունն այդպես է նախատեսում՝ իրավասու մարմնի հաստատմամբ.

iii) աուդիտորական կազմակերպության վարչական կամ կառավարման մարմնի անդամների մեծամասնությունը պետք է լինեն առնվազն 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները բավարարող ֆիզիկական անձինք կամ աուդիտորական կազմակերպություններ. անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այդ ֆիզիկական անձինք կամ աուդիտորական կազմակերպությունները ևս պետք է հաստատվեն։ Եթե այդ մարմինն ունի երկուսից ոչ ավելի անդամներ, ապա այդ անդամներից մեկը պետք է բավարարի առնվազն այդ պայմանները։

Չսահմանափակելով 14(2) հոդվածի գործողությունը՝ աուդիտորական կազմակերպության հաստատումը պետք է չեղյալ ճանաչվի, եթե (բ) ենթապարբերությամբ սահմանված պայմաններից որևէ մեկն այլևս չի պահպանվում։ Այդուհանդերձ, (բ)(ii) և (iii) ենթապարբերությունում սահմանված պահանջները բավարարելու նպատակով անդամ պետությունները կարող են սահմանել արտոնյալ ժամանակահատված, որը չպետք է երկու տարուց ավելի լինի։

2. Սույն Հրահանգի իմաստով, անդամ պետությունների մարմինները կարող են լինել մասնագիտացված ասոցիացիաներ՝ պայմանով, որ վերջիններս ներպետական իրավունքով հաստատման իրավասություն ունենան՝ ինչպես նախատեսված է սույն Հրահանգում։

Հոդված 3

Անդամ պետության մարմինները պետք է հաստատեն միայն բարի համբավ ունեցող անձանց, ովքեր չեն իրականացնում այնպիսի գործունեություն, որը տվյալ անդամ պետության իրավունքով անհամատեղելի է 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացման հետ։

Հոդված 4

1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացման համար ֆիզիկական անձը կարող է հաստատվել միայն այն բանից հետո, երբ նա ունեցել է բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար պահանջվող արդյունք, այնուհետև ավարտել է տեսական գիտելիքների դասընթաց, անցել է գործնական ուսուցում և հաջող է հանձնել պետության կողմից կազմակերպված կամ ճանաչված՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման, ավարտական քննությունը։

Հոդված 5

4-րդ հոդվածում նշված մասնագիտական ունակությունների քննությունը պետք է երաշխավորի 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացմանն առնչվող առարկաների վերաբերյալ տեսական գիտելիքի պահանջվող մակարդակը և այդ գիտելիքը գործնականում կիրառելու կարողությունը։

Այդ քննության առնվազն մի մասը պետք է գրավոր լինի։

Հոդված 6

Քննության մեջ ներառված տեսական գիտելիքին վերաբերող թեմաները պետք է ներառեն, մասնավորապես, հետևյալ առարկաները՝

ա) – աուդիտի իրականացում.

– տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և քննադատական գնահատում.

– ընդհանուր հաշվապահական հաշվառում.

– համախմբված ֆինանսական հաշվետվություններ.

– ինքնարժեքի և կառավարչական հաշվառում.

- ներքին աուդիտ.

– տարեկան և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաշվապահական հաշվեկշռի հոդվածների գնահատման և շահույթի ու վնասի հաշվարկման մեթոդներին վերաբերող չափանիշներ.

– հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտին և այն իրականացնող անձանց վերաբերող իրավական և մասնագիտական չափանիշներ.

բ) այնքանով, որքանով դրանք վերաբերում են աուդիտին՝
– ընկերությունների իրավունք.

– սնանկության և համանման ընթացակարգերի վերաբերյալ իրավունքի նորմեր.

– հարկային իրավունք.

– քաղաքացիական և առևտրային իրավունք.

– սոցիալական ապահովության իրավունք և զբաղվածության իրավունք.

– տեղեկատվական և համակարգչային համակարգեր.

– գործարարություն, ընդհանուր և ֆինանսական տնտեսագիտություն.

– մաթեմատիկա և վիճակագրություն.

– կազմակերպությունների ֆինանսական կառավարման հիմնական սկզբունքներ։

Հոդված 7

1. Շեղում կատարելով 5–րդ և 6–րդ հոդվածներից՝ անդամ պետությունը կարող է նախատեսել, որ անձը, որը հաջող է հանձնել բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման կամ համարժեք քննությունը կամ 6–րդ հոդվածում նշված մեկ կամ ավելի առարկաներից ունի բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան կամ համարժեք որակավորում, կարող է ազատվել այդ քննության մեջ ընդգրկված կամ այդ աստիճանը ստանալու համար նախատեսված առարկաներից տեսական գիտելիքների թեստը հանձնելուց։

2. Շեղում կատարելով 5–րդ հոդվածից՝ անդամ պետությունը կարող է նախատեսել, որ 6–րդ հոդվածում նշված մեկ կամ ավելի առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան կամ համարժեք որակավորում ունեցող անձը կարող է ազատվել այդ առարկաներից իր տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողության թեստը հանձնելուց, եթե նա այդ առարկաներից անցել է գործնական այնպիսի ուսուցում, որը հաստատված է քննությամբ կամ պետության կողմից ճանաչված դիպլոմով։

Հոդված 8

1. Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը երաշխավորելու համար, որոնց վերաբերյալ թեստը ներառված է քննության մեջ, ուսուցում անցնող անձը պետք է առնվազն մասնակցի եռամյա գործնական ուսուցմանը, որը, մասնավորապես, ներառում է տարեկան ֆինանսական և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ նմանատիպ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ գործնական ուսուցում։
Այդ գործնական ուսուցման առնվազն երկու երրորդը պետք է անցկացվի սույն Հրահանգին համապատասխան անդամ պետության իրավունքի համաձայն

հաստատված անձի ղեկավարությամբ. այդուհանդերձ, անդամ պետությունը կարող է թույլատրել, որ գործնական ուսուցումն անցկացվի սույն Հրահանգին համապատասխան այլ անդամ պետության իրավունքի համաձայն հաստատված անձի ղեկավարությամբ։

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն ողջ ուսուցման անցկացումն ուսուցման համապատասխան երաշխիքներ տրամադրող անձանց ղեկավարությամբ։

Հոդված 9

Անդամ պետությունները կարող են հաստատել անձանց՝ 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու համար, եթե անգամ նրանք չեն բավարարում 4–րդ հոդվածով սահմանված պայմանները, եթե վերջիններս կարող են ապացուցել, որ՝

ա) տասնհինգ տարի ներգրավված են եղել այնպիսի մասնագիտական գործունեության մեջ, որը նրանց հնարավորություն է տվել բավարար փորձառություն ձեռք բերել ֆինանսների, իրավունքի և հաշվապահական հաշվառման բնագավառներում և հաջող են հանձնել 4–րդ հոդվածում նշված մասնագիտական ունակությունների քննությունը կամ

բ) յոթ տարի մասնագիտական գործունեություն են ծավալել այդ ոլորտներում և դրա հետ մեկտեղ անցել են 8–րդ հոդվածում նշված գործնական ուսուցումը և հաջող հանձնել 4–րդ հոդվածում նշված մասնագիտական ունակությունների քննությունը։

Հոդված 10

1. Անդամ պետությունները 9–րդ հոդվածում նշված մասնագիտական գործունեություն ծավալելու տարիների թիվը կարող են նվազեցնել 6–րդ հոդվածում նշված ոլորտներում անցած տեսական ուսուցման տարիների թվով՝ պայմանով, որ նման ուսուցումը հաստատվել է պետության կողմից ճանաչված քննությամբ։ Այդպիսի ուսուցումը չպետք է լինի մեկ տարվանից պակաս և այն չի կարող նվազեցնել մասնագիտական գործունեության ժամանակահատվածը ավելի, քան չորս տարով։

2. Մասնագիտական գործունեության և գործնական ուսուցման ժամանակահատվածը չպետք է 4–րդ հոդվածով պահանջվող տեսական ուսուցման և գործնական ուսուցման ծրագրի ժամանակահատվածից պակաս լինի։

Հոդված 11

1. Անդամ պետության մարմինները կարող են հաստատել անձանց, ովքեր իրենց որակավորումը ամբողջությամբ կամ մասամբ ստացել են այլ անդամ պետությունում՝ պայմանով, որ նրանք բավարարում են հետևյալ երկու պայմանները՝

ա) իրավասու մարմինները պետք է նրանց որակավորումները համարժեք համարեն այդ անդամ պետության իրավունքով պահանջվող որակավորումներին՝ սույն Հրահանգի համաձայն, և

բ) նրանք պետք է ապացուցած լինեն, որ տիրապետում են 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի անցկացման համար այդ անդամ պետությունում պահանջվող իրավական գիտելիքներին։ Այդուհանդերձ, այդ անդամ պետության մարմինները կարող են նման ապացույց չպահանջել, եթե գտնում են, որ այլ անդամ պետությունում ստացած իրավական գիտելիքները բավարար են։

2. Կիրառվում է 3–րդ հոդվածը:

Հոդված 12

1. Մինչև 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումը անդամ պետության իրավասու մարմինների անհատական ակտերով հաստատված մասնագիտացված անձանց այդ անդամ պետությունը կարող է համարել սույն Հրահանգի համաձայն հաստատված։

2. Ֆիզիկական անձի ընդունումն այն պետության կողմից ճանաչված մասնագիտական ասոցիացիա, որտեղ, այդ պետության իրավունքի համաձայն, այդ ասոցիացիա ընդունելը անդամին իրավունք է տալիս 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել, կարող է, սույն հոդվածի 1-ին պարբերության իմաստով, համարվել հաստատում անհատական ակտի միջոցով։

Հոդված 13

Մինչև 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումը, անդամ պետությունը կարող է սույն Հրահանգի համաձայն հաստատված համարել այն մասնագիտացված անձանց, որոնք չեն հաստատվել իրավասու մարմինների անհատական ակտերով, սակայն, որոնք այդ անդամ պետությունում ունեն նույն որակավորումները, ինչ անհատական ակտերով հաստատված անձինք և հաստատման օրվա դրությամբ նման հաստատված անձանց անունից 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ են իրականացնում։

Հոդված 14

1. Մինչև 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումը անդամ պետության իրավասու մարմինների անհատական ակտերով հաստատված աուդիտորական կազմակերպություններին այդ անդամ պետությունը կարող է համարել սույն Հրահանգի համաձայն հաստատված։

2. 2(1)(բ)(ii) և (iii) հոդված ով սահմանված պայմանները պետք է բավարարվեն ոչ ուշ, քան մինչև 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառման ամսաթվից հետո հինգ տարին չգերազանցող ժամկետի ավարտը։

3. Այն ֆիզիկական անձանց, որոնք մինչ 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումը աուդիտորական կազմակերպության անունից 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ են իրականացրել, այդ ամսաթվից հետո կարող է թույլատրվել շարունակել իրենց գործունեությունը՝ անգամ եթե նրանք չեն բավարարում սույն Հրահանգով սահմանված բոլոր պայմանները։

Հոդված 15

Մինչև 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումից հետո մեկ տարին լրանալը այն մասնագիտացված անձինք, որոնք չեն հաստատվել իրավասու մարմինների անհատական ակտերով, սակայն, այդուհանդերձ, այդ անդամ պետությունում որակավորված են՝ 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու և մինչ այդ ամսաթիվը փաստացի նման գործունեություն են ծավալել, կարող են հաստատվել այդ անդամ պետության կողմից՝ սույն Հրահանգի համաձայն։

Հոդված 16

30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումից հետո մեկ տարի անդամ պետությունները կարող են անցումային միջոցներ կիրառել այն մասնագիտացված անձանց նկատմամբ, որոնք այդ ամսաթվից հետո պահպանում են որոշակի տեսակի այն ընկերությունների և կազմակերպությունների տարեկան հաշվապահական հաշվառման փաստաթղթերի աուդիտ իրականացնելու իրավունքը, որոնք ենթակա չեն պարտադիր աուդիտի , սակայն, որոնք պարտադիր աուդիտի իրականացման նոր պահանջի ներմուծումից հետո, այլևս չեն կարողանա այդպիսի աուդիտ իրականացնել, եթե հօգուտ նրանց հատուկ միջոցներ չսահմանվեն։

Հոդված 17

3–րդ հոդվածը կիրառվում է 15–րդ և 16–րդ հոդվածների նկատմամբ։

Հոդված 18

1. 30(2) հոդվածում նշված դրույթների կիրառումից հետո վեց տարի անդամ պետությունները կարող են անցումային միջոցներ կիրառել այն անձանց նկատմամբ, որոնք այդ դրույթների կիրառման ժամանակ արդեն անցնում են մասնագիտական կամ գործնական ուսուցում, և որոնք իրենց ուսուցման ավարտից հետո չէին բավարարի սույն Հրահանգով սահմանված պայմանները և այդ պատճառով չէին

կարող իրականացնել 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտը, որի վերաբերյալ իրենք ուսուցում են անցել։

2. Կիրառվում է 3–րդ հոդվածը:

Հոդված 19

15-րդ և 16–րդ հոդվածներում նշված մասնագիտացված անձանցից կամ 18–րդ հոդվածում նշված անձանցից ոչ մեկը չի կարող, 4–րդ հոդվածի դրույթներից շեղման կարգով, հաստատվել, բացառությամբ, երբ իրավասու մարմինները գտնում են, որ նրանք համապատասխանում են 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ անցկացնելու պահանջներին և ունեն 4–րդ հոդվածի համաձայն հաստատված անձանց որակավորումներին համարժեք որակավորումներ։

Հոդված 20

Այն անդամ պետությունը, որը չի օգտվում թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 51(2) հոդվածով նախատեսված հնարավորությունից, և որտեղ, սույն Հրահանգի ընդունման պահին, ֆիզիկական անձանց մի քանի խմբեր, ներպետական օրենսդրության համաձայն, կարող են սույն Հրահանգի 1(1)(ա) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել, մինչև հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտի իրականացման հետագա համաձայնեցման գործընթացի ավարտը, կարող է, 1(1)(ա) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի իրականացման նպատակով, թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 27–րդ հոդվածում ամրագրված երեք չափանիշներից երկուսի սահմանը չգերազանցող ընկերության դեպքում, հատուկ հաստատել իրենց իսկ անունից գործող այն ֆիզիկական անձանց, որոնք՝

ա) բավարարում են սույն Հրահանգի 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները՝ բացառությամբ, եթե մասնագիտական ունակությունները ստուգող քննության մակարդակը ցածր է սույն Հրահանգի 4–րդ հոդվածով նախատեսված մակարդակից, և

բ) պարտադիր աուդիտի են ենթարկել համապատասխան ընկերությանը, մինչև տվյալ ընկերության կողմից թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 11–րդ հոդվածով ամրագրված երեք չափանիշներից երկուսի սահմանների գերազանցումը։

Այդուհանդերձ, եթե կազմակերպությունների խմբի մաս կազմող ընկերությունը, որը պետք է ընդգրկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունում, գերազանցում է թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 27–րդ հոդվածով ամրագրված երեք չափանիշներից երկուսի սահմանը, ապա այդ ընկերության դեպքում նման անձինք չեն կարող սույն Հրահանգի 1(1)(ա) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել։

Հոդված 21

Այն անդամ պետությունը, որը չի օգտվում թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի 6(1) հոդվածով նախատեսված հնարավորությունից, և որտեղ, սույն Հրահանգի ընդունման պահին, ֆիզիկական անձանց մի քանի խմբեր, ներպետական օրենսդրության համաձայն, կարող են սույն Հրահանգի 1(1)(բ) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել, մինչև հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր աուդիտի իրականացման հետագա համաձայնեցման գործընթացի ավարտը կարող է սույն Հրահանգի 1(1)(բ) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտի իրականացման նպատակով հատուկ հաստատել սույն Հրահանգի 20–րդ հոդվածի համաձայն հաստատված ֆիզիկական անձանց, եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում ընդգրկվող կազմակերպությունների խումբը այդ կազմակերպությունների վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համաձայն հիմնական կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ չի գերազանցում թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 27–րդ հոդվածով ամրագրված երեք չափանիշներից երկուսի սահմանը՝ պայմանով, որ հաստատվող անձն իրավասու է համախմբված ֆինանսական հաշվետվությունում ընդգրկված բոլոր կազմակերպությունների՝ սույն Հրահանգի 1(1)(ա) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել։

Հոդված 22

Անդամ պետությունը, որն օգտվում է 20–րդ հոդվածով տրված հնարավորություններից, կարող է թույլատրել, որ 8–րդ հոդվածում նշված համապատասխան անձանց գործնական ուսուցումն անցկացվի այն անձի ղեկավարությամբ, որն այդ անդամ պետության իրավունքի համաձայն հաստատվել է՝ 20–րդ հոդվածում նշված պարտադիր աուդիտ իրականացնելու համար։

ԲԱԺԻՆ III Մասնագիտական ազնվությունը և անկախությունը

Հոդված 23

Անդամ պետությունները սահմանում են, որ 1(1)(ա) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու համար հաստատված անձինք այն պետք է իրականացնեն մասնագիտական ազնվությամբ։

Հոդված 24

Անդամ պետությունները պետք է սահմանեն, որ նման անձինք չպետք է իրականացնեն իրենց կողմից պահանջվող պարտադիր աուդիտ, եթե նրանք անկախ չեն՝ համաձայն այն անդամ պետության իրավունքի, որը պահանջում է աուդիտի իրականացումը։

Հոդված 25

23-րդ և 24–րդ հոդվածները պետք է կիրառվեն նաև 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները բավարարող և աուդիտորական կազմակերպության անունից 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնող ֆիզիկական անձանց նկատմամբ։

Հոդված 26

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաստատված անձինք ենթակա լինեն համապատասխան պատժամիջոցների, եթե նրանք աուդիտը չեն իրականացնում 23–րդ, 24–րդ և 25–րդ հոդվածների համաձայն։

Հոդված 27

Անդամ պետությունները պետք է առնվազն ապահովեն, որ հաստատված աուդիտորական կազմակերպությունների մասնակիցներն ու բաժնետերերը և այդ կազմակերպությունների վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամները, որոնք կոնկրետ անդամ պետությունում անձամբ չեն բավարարում 3–19–րդ հոդվածներով սահմանված պայմանները, չմիջամտեն աուդիտի իրականացմանը որևէ կերպ, որով վտանգվում է այդ աուդիտորական կազմակերպությունների անունից 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի աուդիտ իրականացնող ֆիզիկական անձանց անկախությունը։

Բաժին IV Հրապարակայնությունը

Հոդված 28

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնելու համար իրենց կողմից հաստատված բոլոր ֆիզիկական անձանց և աուդիտորական կազմակերպությունների անունները (անվանումները) ու հասցեները մատչելի լինեն հանրությանը։

Բացի այդ, յուրաքանչյուր հաստատված աուդիտորական կազմակերպության վերաբերյալ հանրությանը պետք է մատչելի լինեն հետևյալ տվյալները՝

ա) 2(1)(բ)(i) հոդվածում նշված ֆիզիկական անձանց անուններն ու հասցեները և

բ) աուդիտորական կազմակերպությունների մասնակիցների կամ բաժնետերերի անուններն ու հասցեները.

գ) աուդիտորական կազմակերպությունների վարչական կամ կառավարման մարմնի անդամների անուններն ու հասցեները։

3. Եթե ֆիզիկական անձին թույլատրվում է 20–րդ, 21–րդ և 22–րդ հոդվածներում նշված պայմանների համաձայն ընկերության՝ 1(1) հոդվածում նշված փաստաթղթերի պարտադիր աուդիտ իրականացնել, ապա կիրառվում է սույն հոդվածի 1-ին պարբերությունը: Այդուհանդերձ, պետք է նշվի այն ընկերության կամ կազմակերպության կամ կազմակերպությունների խմբի տեսակը, որի նկատմամբ թույլատրվում է այդպիսի աուդիտի իրականացումը:

ԲԱԺԻՆ V Եզրափակիչ դրույթներ

Հոդված 29

Թիվ 78/660/ԵՏՀ հրահանգի 52-րդ հոդվածի համաձայն ստեղծված Փոխադարձ կապն ապահովող կոմիտեն՝

ա) չսահմանափակելով Պայմանագրի 169-րդ և 170-րդ հոդվածների գործողությունը՝ նպաստում է նաև սույն Հրահանգի համաձայնեցված կիրառմանը կանոնավոր հանդիպումների միջոցով, որոնց ընթացքում մասնավորապես շոշափվում են դրա կիրառման հետ կապված գործնական խնդիրներ:

բ) անհրաժեշտության դեպքում սույն Հրահանգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում Հանձնաժողովին:

Հոդված 30

1. Մինչև 1988 թվականի հունվարի 1–ը անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ 1-ին պարբերությունում նշված ակտերը չեն կիրառվում մինչև 1990 թվականի հունվարի 1–ը:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ Հանձնաժողովին ներկայացվեն իրենց կողմից սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում ընդունված ներպետական իրավունքի հիմնական դրույթների տեքստերը:

4. Անդամ պետությունները պետք է նաև ապահովեն, որ Հանձնաժողովին ներկայացվի 4–րդ հոդվածի համաձայն կազմակերպված կամ ճանաչված քննությունների ցանկը:

Հոդված 31

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1984 թվականի ապրիլի 10-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Կ. Չեյսոն